ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵԹԵՒԱՆԵԹ

ԵԻ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2
1885

ԳԱՅԼ ՈՒ ԵԶՆԵՔ

(Ժողովրդական զրույց)

Ըեք եղը մի դաշտում աբաժում էին՝ մինը սև, մինը կարմիր, մեկելը սպիտակ։ Մի գայլ եօթն օր էր սոված մեռնում էր, ատամները մազ էր մանում։ Հեռու դաշտում չորքոտանիք նշմարեց, աբին քաշտալով մոտիկ գնաց, կարծելով որ անպող անասուններ են։ Ակառակի պէս պողաւոր եզներ էին, որ նրան տեսնելուն պէս քամակ քամակի արին, պոզերը սրեցին դէպի նա։ Գայլը ծիծաղն երեսին.

—Տօ, լաւ բարեկամներ, ինչո՞ւ էք ուզում ահագին պոզերով ինձ սրտաճաք անել. ինչ մեղքի տէր եմ։ ես էլ ձեզ պէս չորս ոտանի, երկու ականջանի, մի պրուանի. նմանը նմանին վնաս կըտայ. իսկի տես-

նուաճ բան է. ես ձեր հորթի չափ էլ չկամ, խելք կտրելու բան է, որ ինձպես տկարից ձեզ փնաս գայ: Ձուր տեղ սրտներդ ահ էք գցում և ախորժակներդ կոտրում, այս սիրուն խոտը թողում: Շշմարիտ է, վեր և էլ լաւ խոտ կար, համա, անկեղծ ասեմ, կուլ չէր գնում, ընկեր էի ուղում սրտով և նստուած ձեզ պէս բարեկամների հանդիպեցրեց:

Եզները միամտուեցին և նորից մշմշալէ արածելը սկսեցին: Գայլը այնպէս էր ցոյց տալիս, որ արածումէ,—խոտը պոկոտումէր, վերածում, պոկոտումէր, վերածում և քաղցր ու անուշ խօսում սև ու կարմիր եզան հետ:

—Բարեկամներ, դուք երկար չէք կարող այս կանաչ խոտում արածել, սիպտակ եզը ձեզ փորձանքի մէջ կըզցէ. դուք ցերեկն էլ չէք երևում, իսկ սիպտակը գիշերը ճրագի նման լոյս է տալիս ծաղկակոխիներին այդ բանը մեծ թշնամութիւն է. նրանք կըգան թէ դրան պատժեն,—հա, դուք էլ կրակի մէջ կընկնէք: Թողէք նրան ես ձեր մէջից վերացնեմ, վաղօրօք ձեզ էլ փորձանքից ազատեմ:

—Լա, ուղեղ ես դատում, բարեկամ, միաձայն գոչեցին եզները: Կամքիդ ուզածը արա:

Գայլը վազեց, սիպտակին վէրկոխեց: Նա բառանչում էր, իսկ սև ու կարմիրը

հեռու պոզ պոզի արած խնդում էին։

—Օգնեցէք, եղնաղբերաիք, բղղում էր սիպտակը գայլի տակից, մի օր ձեր վզին պիտի չոքի։

—Կորի, անպիտան, քեզ օգնե՞նք, որ անպիտան գոյնովդ կրակի մէջ գցես։

Գայլը խրախուսուած կտրացրեց շունչը։ Մսիցն ուտում էր, գալիս սևի ու կարմրի վզով փաթաթվում, ականները լեզում լպստում, էլի գնում, մսից ուտում կշտանում, գալիս իր խաղն անում, ծուլ ծուլ լինում վզով, մէջքով. այնպէս շարունակեց մինչև սիպտակի միսը հատացնելը։

Մի օր էլ սև եղան ականջում փսփսաց.

—Դիտե՞ս ինչ կայ, քո գոյնը շահաւէտ է, ցերեկն էլ չես երևում աչքի, համա կարմիրը մթնումը պարզ երևում է։ Ես հասատատ ասում եմ քեզ, որ այսօր կամ էգուց կարմիրը իր անշահ գոյնով փորձանքի մէջ կըգցի. արի քեզ դարձեալ լաւութիւն անեմ և ժամանակաւոր կարմրիցն էլ ազատեմ։ Նրանից չետոյ կաց ու այս կանաչ խոտերում մեն մենակ արածիր, ինչքան կամքդ է։ Ուրիշ տեղ էլ լաւ խոտերի տեղ դիտեմ, ցոյց կըտամ, որ գնաս անվախ արածես, փառք Աստծուն, քեզ այնպիսի գոյն է հնարհել, որ ցերեկով էլ չես երևում թշնամիներիդ աչքին։

—Հայտ բարի, ասաց սևուկը, ուղեղ որ, ինչի ուրիշի համար փորձանքի մէջ ընկնեմ, համաձայն եմ խորհրդիդ, մանաւանդ որ դրանով օգուտի մէջ եմ:

Գայլը հասաւ կարմրին կոլոլեց տակը, ժանիքները ցցեց կոկորդի մէջ:

—Սևուկ եղբայր, օգնիր այս անիրաւի ճանկից, սուր պոզովդ սպանիր այս կեղծաւորին, թէ չէ քեզ էլ պէտք է ուտէ:

Սևուկը հեռու կանգնած, պոզերը չարդախ արած, ուրախ նայում է.—Ինչի՞ սպանեմ բարերարին, քեզանից կազատուեմ, որ փորձանքի մէջ չընկնեմ, յետոյ քո բաժին կանայ իւոն էլ ինձ կըմնայ, կուտեմ ու կըգիրանամ:

—Օգնիր ընկեր, թէ չէ ափսոսալը ուշ կըլինի, գայլի հետ աղբերանալ... խօսքը կոկորդում խռխռացնում էր կարմիրը: Ընխիղճ գայլը ժանիքներով դուրս ճոթռեց խրդուիլակը:

Փորը կշտացրեց եկաւ սևուկի հետ խաղ արաւ, դէս ծուլ էլաւ, դէն ծուլ էլաւ, սեւուկի խաթրն առաւ, էլի կերաւ, էլի եկաւ խաղաց, մէկ պոզերի հետ, մէկ աքռւի հետ, մէկ պնչի հետ, վերջապէս մինչև կարմրի միան էլ հատացրեց:

Ընցաւ մի երկու օր. գայլը սոված է, կերակուր չի գտնում. ինչ անի, ինչ չանի որ

փորը կշտացնի, մի բան միտք արաւ և սեւուկին մօտեցաւ.—«Ախորժակս կապուել է, այս քանի օր է մի կտոր միս չեմ կարողանում կուլտալ, քիչ է մնում որ անխիթ մնալուց մեռնեմ, մի ճարի խաթեր քեզ մօտ եմ եկել, ասում են՝ եթէ սև եզան կաշին ատամներիդ քսես, ախորժակդ բաց կըլինի։ Մտդրում եմ, եթէ ինձ սիրում ես, այնքան լաւութիւններ անելով միևչև օրս ամեն փորձանքներից քեզ պրծացրել եմ, ինձ անտես մի՛ անիլ. այս անգամ էլ խնդիրս կատարի, մէկ էլ ժամանակը ինչ ասես, գլուխս քեզ համար յետ դրած է։ Միայն խնդրում եմ, աչքերդ փակիր, որովհետև սաստիկ վախենում եմ նրանցից, ատամներս մի՛ փոքր վզիդ քսեմ, յետոյ իսկոյն բաց արա։»

Միամիտ սևուկի աչքերը հուպ անելը, խոխռալը, ճապաղելն ու վերընկնելը մէկ եղաւ։

Ա. ՇԽԷՆ

ԼՈՒՍԱՆԱՑՔ

այրիկ, ինչո՞ւ մեր Բօղարը
Միշտ հաչում է լուսնի վրան.
Մթին պայծառ լուսնեակը
Մէկ վնաս է տալիս նորան։

—«Ո՛չ, որդեակ իմ, ոչ թէ վնաս,
Այլ լոյս, միայն լոյս է տալիս.
Իսկ շանն—իբրև գայլի ցեղի—
Լոյս դիշերը դիւր չի գալիս։

—Հայց լուսինը խօմ չըգիտէ,
Որ իւր վերայ հաչողներ կան.
Նա լուռ ու մունջ, բակ բոլորած,
Շարունակում է իւր ճամբան։

—«Քենք էլ, որդեակ, լուսնի նման
Պէտք է լոյս տանք մութ աշխարհին
Եւ համարենք, թէ չենք լսում
Մեզ վերայ գոռը հաչողներին...»։

Ղ. ԱՂԱՑԵԱՆՑ.

ՊԱԼԻԵՒԿՏ *)

I

Ին Հայաստանի մայրաքաղաք Մելիտէնի հեթանոսական հոյակապ տաճարներից մէկում, երբ Հայաստանը գտնվում էր Հռոմայեցիների իշխանութեան տակ, կատարվում էր ամենայն օրուայ նման մի շքեղ և հանդիսաւոր ժամերգութիւն։ Ժողովրդի ահագին բազմութիւնը լցրել էր հարուստ, բայց անճաշակ զարդարած տաճարը, և չերմեռանդութիւնով երկրպագում էր բազմաթիւ կուռքերին։ Քուրմերը, հագած սպիտակ և լայն ծալքերով հագուստներ՝ պատրաստվում էին դոհ մատուցանել աստուածներին և բոլորեքեան չերմեռանդութիւնով սպասում էին այդ հրաշալի րոպէին։ Այդ օրը տաճարը սովորականից աւելի լիքն էր. իսկ զոհաբերութիւնը կատարվում էր անսովոր

---

*) Ա.յս պատմական պատկերը ըստ Կօրնելի Հաղմէ է Ս. Ի. Բիժովան և տպուել է ռուսաց „Дѣтское чтеніе“ 1879 Թ. № 3-ում.

փառահեղութիւնով։ Հռովմայեցիների կայսր Դեցիոսը (250 տարի Քրիստոսից յետ) պարսիկների դէմ ունեցած պատերազմը վայլուն յաղթանակով վերջացնելուց յետոյ իր դեսպան Սևէրին ուղարկեց Մելիտէն քաղաք այդ լուրը քաղաքացիներին աւետել և հրամայել, որ աստուածներին գոհ և փառաբանութիւններ մատուցանեն։ Բացի դրանից մօտ ժամանակներում հրատարակուած էր մի հրովարտակ, որով հեթանոսական հաւատը յայտնվում էր իբրև միակ կրօն, որը պէտք է տիրապետէր հռովմէական կայսերութեան բոլոր սահմաններում. իսկ քրիստոնէութեան կողմնակիցներին խստիւ հրամայվում էր հրաժարուել իրանց կրօնից, եթէ ոչ՝ կենթարկուին սաստիկ տանջանքների և մահուան պատժի։ Փողովուրդը՝ շտապելով արտայայտել իր թէ ուրախութիւնը կայսրի տարած յաղթութեան համար և թէ իր եռանդը դէպի հեթանոսական կրօնը, լցրեց այդ օրը մայրաքաղաքի տաճարը։

Փողովրդի յետին կարգերում կանգնած էին երկու մարդիկ։ Նրանք իրանց պահում էին այնպիսի օտարոտի կերպով, որ ականջ իրանց վրայ էին դարձնում ուրիշների ուշադրութիւնը և դրանով դարթեցնում անբաւականութեան տրտունջներ։ Նայած այդ մարդկանց թանկագին շորերին՝ նրանք բարձր դասակարգի մարդիկ էին, բայց չնեղուելով ոչ տեղից և ոչ հանդիսաւոր բոպէից, նրանք բարձրաձայն խօսում էին իրար հետ, առանց ուշադրութիւն դարձնելու նաև շրջապատողների վրայ։ Նրանցից մեծը մօտ յիսուն տարեկան կրլինէր, նրա մազերը տեղ-տեղ սպիտակել էին, իսկ արի և խելօք դէմքը ծածկուած էր խիտ ու սև մորուքով։ Միւսը — աւելի երիտասարդ էր, նրա դէմքը այն դէմքերից էր, որոնց մօտով անկարելի էր անցնել առանց ուշադրութիւն դարձնելու։ Նրա գանգուր սև մազերը շքեղ կերպով իջնում էին իր գեղեցիկ և չափազանց կանոնաւոր դէմքի վրայ, որի բոլոր գծերը

և մանաւանդ մեծ-մեծ մուք-կապտագոյն աչքերը նայում էին անդորրութիւնով և համեստութիւնով...:

—Պալիևիկտ, հասակաւորը յանդիմանութիւնով դարձաւ դէպի ընկերը, դու նոր ես ընդունել քրիստոնէութիւնը և ես քեզ կրկին գտնում եմ այս հեթանոսական տաճարում: Փախիր սուտ աստուածների տաճարից:

Եւ այս խօսքերով նա բռնեց Պալիևիկտի ձեռքը, փորձելով դուրս տանել նրան իր հետ:

—Թող ինձ, Նեարխ, բացականչեց ոգևորութիւնով Պալիևիկտը, ես եկել եմ այստեղ ոչ թէ այս փայտեայ կուռքերին երկրպագութիւն տալու, այլ նրա համար, որ տապալեմ դրանց, և յետոյ, եթէ հարկաւոր է... մեռնեմ մեր հաւատի համար:

—Քո եռանդը դէպի կրօնը չափազանց մեծ է... ասաց Նեարխը անվճռողաբար և քաշ ձգեց գլուխը:

—Ճշմարտութեանը ծառայելու համար չկայ այնպիսի չերմեռանդութիւն, որը չափից դուրս լինէր:

—Բայց յիշիր, որ քո վարմունքը կարող է վտանգի ենթարկել կեանքդ:

—Մեռել մահը կարող է սարսափելի թուել, քանի որ նա բաց է անում մեր առաջ երկինքը: Իմացիր, Նեարխ, որ ես քրիստոնեայ եմ, և ճշմարիտ քրիստոնեայ: Այն հաւատը, որ ապրում է իմ մէջ, առանց գործի մեռած է և այս պատճառով, ով վախենում է տանջանքներից, նա քրիստոնեայ չէ: Մեռել դու դրանցից ես:

—Չեմ ծածկիլ, ես թոյլ եմ, ինձ համար դժուար է հետևել քո օրինակին, ես վախենում եմ չարչարանքներից:

—Ով քայլում է համարձակ, նա վայր ընկնելու երկիւղ չունի:

—Բայց այն մարդը, որ ոչ մի բանից չէ վախենում, չափազանց շատ է վստահանում իր վրայ:

—Ես վստահանում եմ ոչ թէ իմ, այլ այն սուրբ

Հաւատի ոյժի վրայ, որին մենք պէտք է ծառայենք:

—Բայց Ինքը Աստուած էլ վախենում էր մահից:

—Եւ այնուամենայնիւ զոհեց իր անձը: Հետևենք նրա սուրբ օրինակին և այս կուռքերի բեկորների վրայ կառուցանենք նրան տաճար:

—Դու նոր ես ընդունել քրիստոնէութիւն և այդ քեզ ոգևորում է: Աստուծոյ շնորհը դեռ ապրում է քո հոգու մէջ և այդ բոլորը քեզ կարելի է թուում: Իսկ իմ հաւատը արդէն թուլացել է, իմ ջերմեռանդութիւնը դէպի քրիստոնէական կրօնը օրէցօր սառչում է և շատ բան այժմ ինձ թուում է աւելորդ: Բայց Աստուած ուղարկեց քեզ օրինակ ինձ համար, որ կրկին այդ բոլորը վերականգնի իմ մէջ: Գնանք, բարեկամ, և ցոյց տանք բոլորին, թէ ինչ բաների են ընդունակ ճշմարիտ քրիստոնեաները:

—Ահա, այժմ տեսնում եմ իմ առաջ իմ բարեկամ Նեարխին, բացականչեց ցնծութիւնով Պալիևևիտը: Բայց ժամանակը կարճ է, զոհը պատրաստ է. դնանք ճշմարիտ Աստուծոյ իրաւունքները յայտարարելու, տապալենք փտած փայտի կտորները, որոնց առաջև ընկնում է դիւրահաւատ ժողովուրդը երեսի վրայ: Փշրենք քարից և փայտից շինած այս ողորմելի կուռքերը: Չնչեցնենք ճշմարիտ Աստուծու անունը, իսկ մնացածը թողնենք նրա կամքին:

Այս խօսքերն ասողը՝ Հարուստ, յայտնի, կեանքի բոլոր վայելչութիւնները վայելող մի երիտասարդ էր... նա դեռ նոր էր ամուսնացել իր սիրած Պալինայի, Հայաստանի փոխարքայ Ֆելիքսի աղջկայ հետ. նրան բախտը ժպտում էր, սփռելով նրա վրայ իր բոլոր վայելուն պարգևները: Պալիևևիտին մնում էր ապրել ու ուրախանալ: Բայց նա, այդ պատանին անձնուրացութիւնով զոհում էր այդ ամենը իր Աստուծու անուան համար...

Պալիևևիտը և Նեարխը սինդ սեղմեցին միմեանց ձեռքերը. նրանց աչքերը վառվում էր վճռողականութեան

սուրբ կրակով։

Նոյն միջոցին, տաճարում տիրեց հանդիսաւոր լռութիւն։ Քուրմերը, պատրաստելով դոհերը, աղօթելով դառան դէպի արևելք։ Ժողովուրդը ջերմեռանդութիւնով սպասում էր զօհաբերութեանը... Մէկ էլ ամբոխի մէջ լսուեց ծաղր հեթանոսական աստուածների և կատարուող ծիսի վրայ։ Բոլորեքեան զարմացմամբ յետ նայեցին դէպի Պալիևկոտի և Նեարխի կողմը, որտեղից լսվում էին այդ բացականչութիւնները, իսկ Փելիքսը, Պալիևկոտի անունը, որը կանգնած էր տաճարի առաջին կարգում, սարսափելով ճանաչեց, թէ աստուածներին հայհոյողներից մէկը իր փեսան է։ Յանկարծ Պալիևկոտը և Նեարխը անցան ամբոխի միջից տաճարի մէջտեղը և կանգնեցին բեմի աստիճանների մօտ։ Ներկայ եղողների մէջ բարձրացան դժգոհութեան տրտունջներ։ Բայց Պալիևկոտը հպարտ կերպով խաչաձև ծալեց ձեռքերը կրծքի վրայ. նրա հայեացքը փայլում էր վոտահօրէն և հրճուանքով։

—Լսեցէք բոլոր այստեղ եղողներդ, բացականչեց նա բարձր ձայնով, դիմելով դէպի սարսափից լռած բազմութեանը։ Մինթէ դուք իսկապէս կարող էք հաւատալ այս փայտեայ և մետաղեայ չնչին աստուածներին։ Պալիևկոտի և Նեարխի Աստուածը—ահա միակ սկիզբը և պատճառը երկնքի և երկրի։ Դուք ձեր զոյութիւնով պարտական էք Նրան, բայց խոնարհում էք այս անմիտ հրէշների առաջև, որոնք ստեղծուած են ձեր ձեռքերով։

Եւ այս խօսքերով Պալիևկոտը, Նեարխի հետ միասին, առաջ նետուեց դէպի բեմն ու գլխաւոր աստուծու արձանը տապալեց դեռին դէպի դարմանքից ապշած բազմութեան կողմը։ Մէկ զարհուրելի և յուսահատական ձայն դուրս եկաւ բոլորի կրծքից և դղրդեցրեց տաճարի կամարները։ Ժողովրդի մեծամասնութիւնը շփոթուած շտապեց տաճարից հեռանալու, մտածելով թէ երկնքի բարկութիւնը խա-

կոյն պէտք է իջնէ անաստուածների վրայ և դրանց հետ վնաս է նաև տաճարում բոլոր գտնուողներին: Ավելի ծանրախոհները, առաջին սարսափից ուշքի գալով, սկսում էին, թէ ինչ կանէ Փելիքսը, իսկ նա շնչասպառ ձայնով ասաց.

— Պահապանները, տարէք սրանց և գցեցէք բանտը, որտեղ կրկարդացուի դրանց պատժի վճիռը:

II

Բանտը, ուր տարան Պալիևկտին և Նեարխին, գտնվում էր քաղաքի առանձնացած մասերից մէկում: Նրանց զրկեցին մինչև անգամ վերջին մխիթարութիւնից — միասին լինելուց: Առհասարակ հռովմէական կայսրների ժամանակ քրիստոնեաների դրութիւնը շատ վատ էր — նրանց համարում էին վտանգաւոր և չարամիտ մարդիկ և այս պատճառով ոչ միայն կառավարութիւնը, այլև հասարակութիւնը վերաբերվում էր դէպի նրանց թշնամաբար: Նրանց համար հնարվում էին ամենասոսկալի պատիժները, ամենախիստ տանջանքները — նրանց կենդանի այրում էին, կախ էին տալիս, անջիթ-ատրոններում վայրենի գազանների առաջն էին ձգում և այլն: Բայց չնայելով այս բոլորին, քրիստոնէութիւնը օրըստօրէ տարածվում էր, գտնելով նորանոր անձնանուէր հետևողներ, որոնց քարոզութիւնների տարածելու առաջն առնելու համար ամեն տեղ միջոցներ էին որոնում: Գիտենալով որ շատ քրիստոնեաներ մահուան երկիւղից ստիպուած ծածուկ էին գաւանում իրանց կրօնը, կայսրները բազմաթիւ գաղտնի ոստիկաններ էին պահում, որոնց պարտականութիւնն էր գիտել հպատակների մասնաւոր կեանքը: Պատիժներն ու տանջանքները պատրաստում էին նոր մարտիրոսներ միայն:

Պալիևկտին բանտարկեցին մի ցած և նեղ սենեակում, որի ներսը մի հատ կլոր փոքրիկ պատուհանից հա-

գիւ Թափանցում էր ցերեկուայ լոյսը: Այդ ողորմելի սենեակի միակ զարդարանքը կազմում էին մի երկաթեայ մահճակալ, կոպիտ յարդեայ ներքնակով և մի փոքրիկ փայտեայ սեղան, որի վրայ պահապանը օրը երկու անգամ դնում էր մի կուժ ջուր և մի կտոր հաց—բանտարկեալի ճաշը և ընթրիքը: Ձուրջը Թագաւորում էր խորին ու անԹափանցելի լռութիւն, որը ընդհատվում էր միայն նախասենեակում մանեկող պահապանի միատեսակ քայլերով և երբեմն դուրսը իրան նշան տուող բերդապահների ձայնով: Արեգակի ճառագայԹները մուտք չունէին այստեղ. չէր Թափանցում այստեղ նոյնպէս և ոչ մի ուրիշ ձայն շարժումով լի աղմկալից քաղաքից:

Պալիևկտը մի քանի օր հանգիստ անցկացրեց բանտումը: Բայց ահա մի առաւօտ եկաւ նրա մօտ իր ծեր աները և սրտաստուքը աչքերին սկսեց աղաչել նրան, որ խելքի գայ, խղճայ իր մատաղահաս կնոջը և իրան ծերին: Այս խօսքերը սաստիկ ցաւեցրին Պալիևկտին: Նրա առաջ ներկայացաւ իր անցեալ անհոգ և երջանիկ կեանքը... և խեղճ բանտարկեալի սիրտը սկսեց նեղուել այս մտածմունքներից: Նա նստած էր սեղանի առաջև ղլուխը Թեք գցած և լուռ: Տեսնելով, որ աղաչանքները չեն ազդում, Ֆելիքսը սկսեց նախատել նրան և իվերջոյ սպառնալ պատիժներով և մահով: Այնժամանակ կրկին վերադարձաւ Պալիևկտի հաստատամտութիւնը և նա մնաց անդրդուելի... Ծեր Ֆելիքսը դուրս եկաւ և Պալիևկտը կրկին մնաց մենակ իր բանտում, բայց, ինչպէս և առաջ, քաջասիրտ և հաստատ իր վճռին:

Պահապանը բաց արեց քիչ դուռն ու ղլուխը ներս մտցրեց:

—Ի՞նչ ես ուզում, Հարցրեց Պալիևկտը:

—Քո կինը կամենում է քեզ տեսնել...:

Պալիևկտը դողաց. նա դիմացաւ Ֆելիքսի յանդի-

մանուքիւններին և սպառնալիքներին, բայց կըդիմանաք արդեօք սիրող և սիրեցեալ կնոջ աղաչանքներին ու արտասուքներին:

— Ամենից սարսափելին դիմադրելն է, շնջաց բանտարկեալը: Ֆելիքս, ես սառնասիրտ մնացի դէպի քո սպառնալիքները, բայց դու կամենում ես առաջ տանել քո կամքը — դու դիմում ես ուրիշ միջոցների, դու ուղարկում ես այժմ ինձ մօտ կնոջս, լաւ դիտենալով, որ նրա արցունքները աւելի զօրեղ են քան քո բոլոր դահիճները, բայց ես կըդիմադրեմ և սրան... և նա հաստատ ձայնով հրամայեց պահապանին կանչել կնոջը:

Սենեակը մտաւ մի ջահել կին, համարեա թէ երեխայ, այնքան անմեղութիւն էր երևում նրա հրաշալի դէմքի վրայ: Բայց այժմ այդ դէմքը դառնատուել էր, մեծ և թուխ աչքերը սրտայոյզում էին մեծ կսկիծ և յուսահատութիւն, իսկ երկայն ու սև շորերը, առանց միօրևէ զարդարանքի, տալիս էին նրան մի առանձին փառահեղութիւն: Նա անվստահ կանգնեց դրան շեմքին:

— Ի՞նչ ես կամենում դու ինձանից, հարցրեց Պալևևկոը համարեա հաստատ ձայնով: Քո մէջ ես պէտք է տեսնեմ թշնամուս, թէ սիրելի կնոջս:

— Դու ունիս միայն մի թշնամի և այդ դու ինքդ ես, պատասխանեց Պալինան: Միմիայն դու ես քեզ ատում և որոնում ես քեզ համար կորուստ այնժամանակ, երբ բոլորեքեան քեզ սիրում են և կամենում են ազատել: Ցիշիր, ով ես դու. դու կայսրի և բոլոր ժողովրդի սիրելին ես, դու առաջնակարգ և բարձրաստիճան մարդու փեսայ ես:

— Ես քեզանից հեռու եմ նայում և հասկանում եմ իմ բոլոր օգուտները: Ես ունիմ ինքնասիրութիւն, բայց նա բարձր է քոնիցը: Ես որոնում են այնպիսի բախտաւորութիւն, որը լինէը բարձր մարդկային նախանձից և ճակատագրի փոփոխականութիւնից:

—Անմիտ ցնորքներ, բացականչեց Պալինան։ Բայց մի՛թէ քո կեանքը պատկանում է միմիայն քեզ։ Ո՛չ, քո կեանքը պատկանում է Թագաւորին, Հասարակութեանը։

—Ես ես ուրախ կըլինէի մեռնել դրանց համար կռուի դաշտում, պատասխանեց ոգևորութիւնով Պալիևկը։—Դու ճշմարիտ ես ասում, իմ կեանքը պատկանում է ժողովրդին, Թագաւորին և նամանաւանդ Աստծուն։

—Ի՞նչ Աստուած, հարցրեց Պալինան տարակուսանքով։

—Մեր Աստուածը—քրիստոնեաների Աստուածն է։ Նա է իմ Աստուածն էլ, քոնն էլ։ Երկինքը և երկիրը չունին ուրիշ Աստուած։

—Սիրիր նրան սրտումդ, բայց ծածկիր այդ սերը, ասաց Պալինան։

—Ուրեմն դու կամենում ես, որ ես լինեմ միևնոյն ժամանակ հեթանոս էլ, քրիստոնեայ էլ։

—Գոնէ մի կարճ ժամանակամիջոց քեզ այդպէս ցոյց տուր, որ Հայրս կարողանայ քեզ ազատել։

—Անկարելի բան է, պատասխանեց մտածմունքների մէջ խորասուզուած Պալիևկոը։

—Ապերա՛խտ, բացականչեց Պալինան, մինչև այժմ ես չեմ յանդիմանել քեզ, ոչինչ չեմ ասել քեզ այն մասին, թէ ինչ կըլինի քո մեռնելուց յետոյ անբախտ կնոջդ հետ։ Ես յոյս ունէի, որ քո դէպի ինձ ունեցած սէրն ինքը կըխօսէ քո սրտում... բայց այժմ տեսնում եմ, որ դու կարող ես բաժանուել նաև ինձանից առանց մի արտասուքի, առանց մի հառաչանքի։ Այդ քէչ է, դու մինչև անգամ կարծես ուրախ ես ինձանից բաժանուելուն։

Եւ այս խօսքերով ամբախտ կինը ծածկեց իր դէմքը և սկսեց հեկեկալ։

Պալիևկոի աչքերը շաղուեցին, նրա գլուխը սկսեց պտրտել։ Այդ րոպէում նրա մէջ զարթեել էր դէպի Պալինան ունեցած իր սէրը բոլոր առաջուայ ուժով, և նա

արդէն պատրաստ էր մոռանալ ամեն բան՝ ընկնել նրա պարանոցի վրայ և բացականչել.

— Պալինա՛, ես սիրում եմ միայն քեզ և միմիայն քեզ, ես քոնն եմ ընդ միշտ:

Եւ մի՛թէ նա չէր երդուել նուիրել կնոջը իր բոլոր կեանքը: Եւ այժմ նրա մէկ հատ խօսքը կարող էր ցամաքացնել Պալինայի արտասուքները: Բայց երկար չտևեցին Պալիևկտի մէջ երկու հակառակ զգացմունքները — բարոյական պարտքը և դէպի կինն ունեցած սէրը, թէև մեծ դժուարութիւնով բայց նա զսպեց իրան և նրա հոգուն այժմ տիրեց մի նոր ցանկութիւն — ցանկութիւն՝ Պալինային նոյնպէս քրիստոնեայ դարձնել:

— Աստուա՛ծ իմ, բացականչեց նա, — լսի՛ր իմ աղօթքը, Պալինան ունի անչափ շատ առաքինութիւններ, բայց նա քրիստոնեայ չէ: Դու, որ տուել ես նրան այդքան արժանաւորութիւնները, մի թողնիր, որ նա մեռնի իրրև կուռութեան ստրկուհի, առանց քեզ ճանաչելու և սիրելու:

— Թո՛ղ քո ցնորքները և սիրի՛ր ինձ, ինչպէս առաջ բացականչեց Պալինան, աշխատելով ձեռքերով վանթաթուել ամուսնու վզին:

— Մի՛թէ դու չգիտես, ասաց Պալիևկտը մտածութեան մէջ ընկղմած, թէ ինչպէս սաստիկ եմ սիրում քեզ: Ճշմարիտ է, աւելի քիչ, քան իմ Աստծուն, բայց, հաւատացի՛ր, աւելի շատ քան թէ ինձ:

— Ներդուեցնում եմ այդ սիրոյ անունով, մի թողնիր ինձ, մի բաժանուիր ինձանից, աղաղակեց ողբալով Պալինան:

— Այդ սիրոյ անունով հետևի՛ր ինձ և բաժանի՛ր ինձ հետ իմ տանջանքները:

— Քեզ համար քիչ է ինձանից բաժանուել, դեռ կամենում ես ինձ էլ կորստեան մատնել, ասաց Պալինան ու յետ քաշուեց ամուսնուց:

— Ո՛չ, բացականչեց Պալիևկտը ոգևորութիւնով, ինձ

համար քիչ է իմ սեպհական փրկութիւնը, ես կամենում եմ քեզ եւս փրկել։

—Դրանք ցնորքները են, որոնց ես չեմ հաւատում։

—Ցնորքներ չեն, այլ Աստուածային սուրբ ճշմարտութիւններ։

—Մեռիր ուրեմն, դու երբէք լինած սիրելիս չես եղել։

Եւ այս խօսքերով անբախտ կինը դուրս եկաւ սենեակից, անդիտակցաբար անցաւ երկար ու մութ նախասենեակով և ուշքի եկաւ այնժամանակ միայն, երբ բանտի ծանր դուռը դղրդմամբ փակուեց նրա յետևից և արեգակի ճառագայթները շփուեցին նրա դէմքին։ Ճնութիւնը կարծես տօնում էր գարնան սկիզբը, որը այնքան դեղեցիկ է լինում տաք երկիրներում։ Բայց այս հրաշալի պայծառ երկնքի տեսքը աւելի սաստկացնում էր Պալինայի վիշտը և նրան թւում էր, թէ նրա շուրջը դտնուած բոլոր առարկաները ծիծաղում են իր վրայ։ Ակամայ համեմատում էր նա արեգակի այս պայծառ լոյսը բանտում տիրող խաւարի հետ։ Պալիևկտին բռնելու առաջին օրից սկսած նա այնքան տանջուել էր, որ այժմ կորցրել էր մինչև անգամ վշտանալու ընդունակութիւնը։ Բայց մինչև այսօր դեռ յոյս ունէր, որ Պալիևկտը կըհրաժարուի իր մոլորութիւններից, կըխղճայ իր վրայ, կըզիջանի իր ազատանքներին և այնժամանակ կըյաջողուի հօրը ազատել նրանից։ Ինքը քրիստոնեայ չլինելով չէր կարողանում հասկանալ Պալիևկտի վարմունքը, և մի դառը միտք՝ թէ Պալիևկտը իրան չէ սիրում և երբէք սիրելիս չէ եղել (այլապէս նա կըզիջանէր), այրում էր նրա սիրտը։ Իսկ ինքը եղել է միշտ սիրող կին...։ Ամեն բան կըներէր նա Պալիևկտին, ամեն բան, բացի սառնութիւն...։

III

Հաստատ պատժի օրը: Առաւօտեան վաղ Պալիևկտը վերկացաւ, որ աղօթքով ամրացնի իր սիրտն ու պատրաստուի մահուան սարսափելի րոպէին: Կնոջ հետ տեսնուելուց յետոյ էլ ոչինչ չէր վրդովում, ոչինչ չէր անհանգստացնում նրան: Նա պլմադրեց Պալինայի աղաչանքներին և արտասուքներին, խզեց իր բոլոր երկրային կապերը, հաստատ մնաց իր սուրբ հաւատին: Այժմ ոչ մի բանից երկիւղ չունէր նա, և միայն անհամբերութիւնով սպասում էր իր տանջանքների վերջին: Նա առաջուց գիտէր որ իր վարմունքը տաճարում մահ է սպառնում իրան, որովհետև Թէև Ֆելիքսը, իր հասկացողութեան համեմատ, սիրում էր փեսային, բայց ամենից թանգ էր նրա համար իր բարձր դրութիւնը և կայսրի կարծիքը. իսկ ներել փեսային—այդ կընշանակէր իրան ենթարկել թագաւորի բարկութեանը: Երէկ Ֆելիքսը դրժ դրեց վերջին միջոցը իր աղջկայ ամուսնուն ազատելու համար — նա ստիպեց նրան ներկայ լինել Նեարխի, իր սիրելի բարեկամի մահուան պատժին, կարծելով թէ դրանով կըվախացնի նրան, բայց Պալիևկտը վերադարձաւ բանտը, թէև նեղուած, կոտրած սրտով բայց աւելի հաստատ կամքով նոյնպէս դոհուելի Քրիստոսի անուան:

Հազիւ թէ սկսել էր Պալիևկտը աղօթել, որ յանկարծ դռան ճռնչիւնը ստիպեց նրան յետ նայել, և նա տեսաւ Ֆելիքսին և Պալինային: Նա հասկացաւ թէ ինչու են նրանք եկել, բայց մնաց անվրդով, ձեռքերը խաչաձև կրծքին դրած: Նա միևչև անդամ չնայեց Պալինային, որը թուլութիւնից խօսելու ուժ անդամ չունենալով, ընկաւ աթոռի վրայ: Ֆելիքսը մօտեցաւ փեսային.

— Անբախտ դու, մինթէ կեանքը քեզ այդչափ զզուելի է, սկսեց: Մինթէ ձեր քրիստոնէական օրէնքները

այնքան անխիղճ են, որ հարկադրում են քեզ թողնել բոլոր ազգականներիդ, բոլոր սիրելիներիդ։

—Ո՛չ. կեանքը զզուելի չէ ինձ, ասաց Պալիևկոը։

—Բայց ես շատ բան չեմ պահանջում քեզանից, շշնջաց Ֆելիքսը անվստահութիւնով, կարծես թէ վախենալով, որ մի՛ գուցէ բանտի պատերը լսեն նրա այս խօսքերը.—ինչ կրօն ուզում ես դաւանիր, միայն թէ ծածուկ։

—Այդ խորհուրդներդ պահիր կռապաշտների համար, ասաց անբաւականութիւնով Պալիևկոը։

—Բայց իմացիր և այն, բացականչեց բարկութիւնով Ֆելիքսը, որ դու պէտք է ընտրութիւն անես երկու բանի մէջ—կամ պէտք է զոհ բերես մեր աստուածներին և կամ քո Աստուծոյ համար սպանուիս։

—Ես իմ ընտրութիւնը արդէն վաղուց եմ արել, Հանդարտ պատասխանեց Պալիևկոը։

Մինչև այժմ Պալինան լսում էր դունաթափուած և լուռ...։ Նա մինչև այժմ շատ մութ և անորոշ կերպով հասկանում էր միայն, որ Պալիևկոը չէ համաձայնվում հօր խնդիրներին, բայց Ֆելիքսի վերջին խօսքերից նա բոլորովին ուշքի եկաւ։ Նրա աչքերի առաջ ներկայացաւ սև մահուդով ծածկուած կախաղանը և իր ամուսնու գլխի վրայ բռնած դահճի կացինը։ Արագութիւնով վերթռաւ նա իր տեղից, մօտեցաւ հօրը և բացականչեց սրտաճմլիկ ձայնով.

—Դուք երկուսդ էլ կամենում էք իմ մահը։

—Ես ոչինչ չեմ կարող անել, խնդրիը քո ամուսնուն, կտրեց նրա խօսքը Ֆելիքսը։

—Ես քեզ ինչ եմ արել, անգութ, որ դու այդպէս ես վարվում ինձ հետ, շարունակեց Պալինան, դառնալով դէպի Պալիևկոը։ Դու տեսնում ես իմ արտասուքները, ուրեմն յուսահատութեան մի հասցրու կնոջդ, որը քեզ սիրում է այսպէս ջերմ կերպով։

—Ես արդէն առաջարկեցի քեզ մեռնել ինձ հետ և

մինոյնն էլ այժմ եմ առաջարկում։ Փելիքս, ասելացրեց նա յետ մղելով կնոջը և դառնալով դէպի անները, ժամանակ է պարտքդ կատարելու և վրէժխնդիր լինելու քո աստուածներին համար յանդուգն վատաբանողին։

— Հայր, աղաղակեց սարսափից ու յուսահատութիւնից դժուած Պալինան, դիտեմ, որ սրա յանցանքը մեծ է, որ չէ կարելի ներել սրան, բայց եթէ սա անմիտ է և անխելք, դու լաւ հասկանում ես բոլորը։ Հայրը երբէք չէ դադարում հայր լինելուց. և ես դեռ յոյս ունիմ... խղճա անբախտ աղջկադ, ես չեմ տանիլ այս մեղապարտի մահը, սա սիրելի և թանկ է ինձ համար, չնայելով իր բոլոր յանցանքներին։ Եւ Պալինան չոքեց Հօր առաջ, ծածկելով Հօր ձեռքերը համբոյրներով և արտասուքներով։

— Դու ճշմարիտ ես ասում, բացականչեց Փելիքսը, բարձրացնելով հեծկլտացող աղջկան, ես քեզ հետ միասին կաղաչեմ այդ անբախտին։

— Պալինա, մի՞թէ չեն ազդում քեզ վրայ կնոջդ այնքան արտասուքները և սէրը, թէ՞ դու սիրտ չունիս բոլորովին։ Մի՞թէ դու մոռացել ես ինձ տուածդ բարեկամութիւնը և սէրդ, որ խոստացար կնոջդ։

Պալինային դէմքի վրայ ժպիտ փայլեց։

— Փելիքս, ասաց նա, դու դրծ դրիր ամեն տեսակ մեջոցներ՝ դու փորձեցիր սպառնալ մահով, ստիպեցիր ինձ ականատես լինել ընկերոջս մահուան պատժին, փորձեցիր սիրելի կնոջս արտասուքների և սիրոյ ուժը, այժմ էլ նրա հետ միասին ինքդ կամենում ես փոխել տալ իմ վճիռը, բայց ի դո՞ւր...

— Ուրեմն լսիր ինձ վերջին անգամ, դոչեց կատաղութիւնով Փելիքսը — կամ երկրպագիր մեր աստուածներին, կամ մեռի՛ր։

— Ես քրիստոնեայ եմ, հաստատ ձայնով պատասխանեց Պալինային։

— Քեզ այդ բոլէին կրտանեն մահուան պատժի։

— Ես քրիստոնեայ եմ։

— Ջինուորնե՛ր, տարէ՛ք սրան, ասաց Փելիքս, խեղդուող ձայնով, բացանելով դէպի նախասենեակը տանող դուռը։

Մի սարսափելի, սրտաճմլիկ ճիչ դուրս թռաւ Պալինայի կրծքից։

— Ո՞ւր էք տանում դրան, աղաղակեց նա, աշխատելով հեռացնել զինուորներին Պալիևկտից։

— Մահուան պատժի, մռայլ կերպով պատասխանեց Փելիքսը։

— Մի՛ հաւատար, Պալինա, բացականչեց Պալիևկտը, ինձ ոչ թէ դէպի մահ են տանում, այլ դէպի փառք, որը գուցէ ապագայում միայն հաստատուի։

— Մնաս բարով, Պալինա, միշտ յիշիր ինձ, աւելացրեց նա դողդոջուն ձայնով։

— Թողէ՛ք ինձ... ես կը՛դամ քեզ հետ և նոյնպէս կը՛մեռնեմ, եթէ դու մեռնելու լինիս, աղաղակեց Պալինան, քարշ ընկնելով զինուորների շորերից և ձեռքերից։

Նա այդ րոպէին սարսափելի էր։ Նրա մազերը ցած էին թափուել, պղտոր աչքերը վայրենաբար թափառում էին շուրջը, ինչպէս խելացնորինը...։

— Հեռացրէ՛ք դրան, ասաց Փելիքսը, հազիւ պահելով իրան, և առաջինը դուրս եկաւ սենեակից։

Տխուր հանդէսը շարժուեց, բայց Պալինան այնպէս քարշ ընկաւ ամուսնոյ շորերից, որ մի զինուոր հարկադրուեց ուժ գործ դնել նրան հեռացնելու համար։ Երբ անբախտ կնոջից խլեցին բոլորը ինչ որ նա սիրում էր, այնժամանակ բնութիւնն էլ իր իրաւունքը գործ դրեց— Պալինան առանց մի ձայն անգամ հանելու, առանց մի հառաչանք անգամ արձակելու, ինչպէս տակից կտրած մի ծառ, ընկաւ գետնի վրայ։

Այն հրապարակը, ուր բերին Պալիևկտին և որի վրայ պէտք է կատարուէր նրա պատիժը, արդէն լիքն էր բազ-

մաթիւ հետաքրքքիր ամբոխով։

Պալիևևկոը հաստատ քայլերով անցկացաւ ժողովրդի միջով։ Նրա դէմքը անվրդով էր, իսկ շրթունքների վրայ խաղում էր ժպիտը։ Նա համարձակ բարձրացաւ պատժաբանի վրայ և կանգ առաւ՝ վերջին անգամ իր ծննդավայրի վրայ մի հայեացք ձգելու։ Բայց այս հայեացքում զղջման նշոյլ անգամ չէր երևում։

Բարձր աստիճանաւորներից մէկը մօտեցաւ մեղապարտին և ըստ սովորականին հարցրեց նրան, չէ հրաժարվում արդեօք իր մոլորութիւնից։

Պատասխանի փոխարէն Պալիևևկոը բարձր ձայնով բացականչեց.

— Ես տապալեցի ձեր կուռքերը, ոչնչացրի ձեր տաճարի բեմը. և եթէ այդ արած չըլինէի այնժամանակ, կանէի այժմ՝ Ֆելիքսի, սենատի և մինչև անգամ կայսրի առաջ։

Ամբոխի մէջ լսելի եղան կատաղի տրտունջներ։

— Մահ, մահ այդ անաստուածին, եթէ ոչ աստուածների զայրոյթը մեզ վրայ պէտք է իջնէ, գոչեցին մի քանի ձայներ։

— Մահ, մահ դրան, գոռաց բոլոր ամբոխը կատաղութիւնով։

Պալիևևկոը երեսը խաչ հանեց և դրեց գլուխը դահճի կացնի տակ։ Աչքերը դարձած էին դէպի երկինքը, իսկ շրթունքները կրկնում էին՝ նեարխ, նեարխ...։

Մի քանի վայրկեանից յետոյ նրա գլուխը բաժանուեց մարմնից և գլորուեց քանի մի քայլ հեռու։ Նահատակի դէմքը արտայայտում էր նոյն անդորրութիւնը, ինչ որ կենդանութեան ժամանակն էր, մի դիծ անգամ չէր փոխուած նրա վրայից. շրթունքները նոյնպէս ժպտում էին, ինչպէս մահից մի քանի րոպէ առաջ. և միայն աչքերն էին, որ արդէն էլ չէին արտայայտում իրանց նախկին փայլը։

ՇՈՒՇԱՆԻԿ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆ։

ԱՂՔԱՏԻ ԲԱԺԻՆ

Լուսը գալիս է խիտ-խիտ օրնիբուն,
Գետինը ծածկում սպիտակ ու սիրուն,
Սուր քամին փչում հիւսիսի կողմից,
Սառույցով կապվում գետերն գոչալից...:
Է՜հ, դու կեանք անզուարթ, աղքատի բաժին,
Փիծաղի համար չես տրուած մարդին...

Մի խուլ փողոցում աղքատ, թշուառ կին
Մէկ տան դռնի մօտ, երեխան կողքին,
Կանգնած էր դողդող, ահա երկու օր
Մանուկն էլ ինքն էլ քաղցած, սգաւոր:
Մի սև դրամ էր լոկ նրա խնդրածը.—
Հաց տայ աղջկան, կտրէ նրա լացը.
Սակայն մեծ ցրտից փետացած ձեռում
Ողջ երկու օր նա կոպէկ չէր տեսնում...:
«Մայրիկ, քաղցած եմ... Մայրիկ, հաց տուր ինձ»...
Մրմնջում էր մլշտ աղջիկը ցաւից:
Սառստուռ էր ծադում խեղճ կնկայ մարմնում
Իր երեխայի խօսքերից տրտում.
Խոր ընկած ու մութ աչերից տաք-տաք
Արցունք էր վազում հէնց այդժամանակ...:
«Հիմա, գաւակս, հիմա... սպասիր...»
Արտասանում էր մայրը գթալիր,
Եւ իր աչքերը դէսուդէն դալցնում
Թէ արդեօք մարդ չէ նրանց մօտենում:
Բայց անցորդը շուտ գնում առջևից,
Ձրլսելով կնկայ ձայնն աղաչալից.

Հառաչ էր ելնում աղքատի կրծքից...
«Ե՛կ գիրկս, որդիս...» և ցնցոտիից
Կարկտած շորով նա փաթաթում էր
Իր գրկում աղջկայ սառած ոտիկները...:
Եւ ժամ էլ անցաւ... Լուռ է երեխան.
Աչերը փակած, գրկում մայրական
Կարծես անուշիկ քնով ընկղմուած՝
Նա մերթ լոկ հառաչ է հանում կամաց:
Մայրն՝ ուրախացած որ քնեց իր որդին,
Ձոյում էր այն մխիթ, թէ հէնց այդ ժամին
Նա գէթ կրծտանայ անցորդից կոպէկ,
Եւ միշտ իր ձեռն էր պարզում ահաբեկ...:
Ձիւնը թափվում էր նրա գլխի վերայ,
Ցուրտն էլ ոտները սառեցնում անխնայ,
Մանուկն էլ կտրեց իր հառաչները,
Նա լուռ է—մոռցաւ իր մեծ ցաւերը:
Բայց մօր զուարթութիւնն անչափ է ու մեծ.—
Բարի մէկ անցորդ հէնց կոպէկ տուեց...
Երեխան գրկում՝ շտապում, հաց է գնում,—
«Ջարթիր աղջիկս, հա՛ց տամ...» մրմնջում...
Բայց որդին լուռ է, ոչինչ չէ լսում.
Մօր սիրտը, սաստիկ բաբախել սկսում...
«Ջարթիր, աղջի՛կս...» ձայն տալիս մայրը...
Սակայն խորին է մանուկի քունը.
Նա էլ չէ լսում ձայն դորովալից.—
Քնած է յաւիտեան, սառած է ցրտից...:

—

Ձիւնը գալիս է խիտ-խիտ օրնիբուն,
Գետինը ծածկում սպիտակ ու սիրուն,
Սուր քամին փչում հիւսիսի կողմից,
Սառոյցով կապվում գետերն գոչալից...:
Էհ, դու կեանք անզուարթ, աղքատի բաժին,
Ծիծաղի համար չես ստուած մարդին...:

Լեռնեցի:

Փարիզ

ԱՅՆ՝ ԻՆՉ ՈՐ ՉԿԱՐ

(Վ. Գաբրիննեց)

Ռունիսեան մի գեղեցիկ օր,—իսկ գեղեցիկ էր նրա համար, որ տաքութիւնը ըստ Բէօմիւրի չերմաչափի քսանութ աստիճան էր,—յունիսեան մի գեղեցիկ օր շոգը պատել էր ամեն տեղ. այդու ձորակում, ուր նոր հնձած խոտի դէզ կար դրած, շոգը աւելի սաստիկ էր, որովհետև այդ տեղում խիտաւիտ կեռասիների շնորհիւ քամի չէր խաղում։ Համարեա ամեն ինչ քնած էր։ Մալդիկ՝ ճաշերը կերել պրծել ու կողքերի վրայ թիկն էին տուել. թռչուննները սքլել էին. քանի մի միջատներ անգամ շոգի ձեռքից թաք էին կացել։ Տանու կենդանիները Հօ՝ ասել չի ուզի՝ մեծ ու փոքր բոլորն էլ հաւաքուել էին չարդախի տակ. շունն էլ՝ իր համար մի փոս էր փորել շտեմարանի տակին ու մէջը մտել, աչքերը կէսխուփ, վարդագոյն կարմիր լեզուն մօտ կէս արշին հանած՝ ծանր շնչում էր, և երբեմն էլ՝ թմրեցուցիչ շոգից առաջացած սրտնեղութիւնից անշուշտ, այնպէս էր յօրանջում, որ մինչև անգամ հետը մի բարակ ծմրոց էլ էր լսվում. խոզերը՝ մայրիկը իր տասներեք որդկերանցով գնացին գետեղը և վերթափուեցին սև, թանձր փխակի մէջ, այդ պատճառով փխակի մէջից երևում էին միայն երկու ծակիկներով վինչացող ու խռմփացող խոզի ներքանները, երկարաւուն ցեխաթաթախ մէջքեր ու մէկ էլ ահագին կախ-կախ ականջներ։ Միայն Հաւերն էին, որոնք շոգից չվախենալով, մի կերպ ժամանակները անց էին կացնում՝ քշուշ էին անում խոհանոցի պատշգամբի հանդէպի չոր հողը, որի մէջ՝ լրանք էլ շատ լաւ գլտէին թէ՝ կէնտ մի հատիկ էլ չկայ, բայց այն էլ աքաղաղը քէֆումը չէր ե-

ըևռում, որովհետև երբեմն մի շատ չիմար կերպարանք էր ստանում և բոլոր ուժով բղաւում՝ «կա՜ա-րգուկա-նո՜ոն»։

Ահա մենք հէնց այդ ձորակից հեռացանք, ուր ամեն տեղից շատ շոգ էր, և հէնց այդ ձորակում էր, որ անքուն պարոնների մի ամբողջ ընկերութիւն էր նստել։ Այսինքն նստել էին, բայց ոչ ամենքը. օրինակ, պառաւ աշխէտը՝ ձի լինելով, ամենևին նստել էլ չգիտէր, մի ինչ որ թիթեռի թրթռուր նոյնպէս չէր նստել, այլ աւելի, ուղիղն ասած, պառկած էր փորի վրայ. գայց ախր խնդիրը հօ բառի մէջ չէ։ Կեռասենու տակ մի փոքրիկ, բայց շատ լուրջ ընկերութիւն էր հաւաքուել՝ խխունջը, կոյեադնդեռը, մողէսը և վերոյիշեալ թրթռուրը. եկաւ դրանց հետ միացաւ նաև ճպուռը։ Դրանց մօտ կանգնած էր և պառաւ աշխէտը, որը լսում էր դրանց խօսակցութիւնը դէպի նրանց դարձրած մէկ կարմիր ականջով, որի ներսը գորշ մազերով էր ծածկուած. իսկ աշխէտի վրայ էլ երկու ճանճ կար նստած։

Ընկերութիւնը քաղաքավարի, բայց բաւականին ոգևորուած կերպով վիճում էր, ուստի և, ինչպէս սպասելի էր, ոչով մէսի հետ չէր համաձայնում, որովհետև խրատչիւրն իր կարծիքի ու բնաւորութեան անկախութիւնը թանդ էր գնահատում։

— Իմ կարծիքով, ասում էր կոյեադնդեռը, օրինաւոր կենդանին նախ և առաջ պարտաւոր է իր սերունդի մասին հոգալ։ Ամպագայ սերունդի համար կեանքն աշխատանք է։ Նա՝ ով որ ընութիւնից իրա վրայ դրած պարտականութիւնը գիտակցաբար է կատարում, նա, ասում եմ, ամուր հողի վրայ է կանգնած, նա գիտէ իր գործը, և՝ հէնց ինչ էլ որ պատահի, նա պատասխանատու չի լինիլ։ Նայեցէք ինձ վրայ, ինձանից շատ ով է աշխատում։ Ամբողջ օրերով առանց հանգստութեան ով է քաշտալի այսպիսի ծանր գունդ,—գունդ՝ որին ես այսպէս համառութիւնով ստեղծել եմ աղբից մի մեծ նպատակի համար—այն է՝ որ մի-

ջոց տամ նրանից դուրս գալու ինձ նման նոր կոչեադրնդեռները. և ես չկարծեմ թէ ովևիցէ այսպէս հանգիստ լինէր խղճով և կարող լինէր մաքուր սրտով ասելու. «Այո, ես կատարեցի բոլորը, ինչ կարող էի և պարտաւոր էի կատարելու», ինչպէս ես կասեմ, երբ լոյս աշխարհ կրգան նոր կոչեանդնդեռները: Ահա ինչ կընշանակէ աշխատանք:

—Էհ, եղբայր, դու ու քո աշխատանքը, — ասաց մըրջիւնը, որը կոչեադնդեռի խօսակցութեան ժամանակ՝ չնայելով այն սաստիկ շոգին, չոր ցողունի մի ահագին կտոր քաշտուած տանում էր: Նա մի րոպէ կանգ առաւ, յետի չորս ոտերի վրայ նստեց, իսկ երկու առաջիններով սրբեց իր խոնջացած երեսից քրտինքը, — չէ որ ես էլ եմ աշխատում և քեզանից էլ աւելի: Բայց դու աշխատում ես քեզ համար կամ, ողջ մէկ է, քո ճուտերի համար. ամենքն էլ քեզ պէս բախտաւոր չեն... Հապա մէկ փորձէիր դու ուրիշների համար զերաններ քաշտալ, ինչպէս որ ես եմ անում: Ես ինքս էլ չգիտեմ թէ ինչն է ինձ ստիպում աշխատել, ուժասպառ լինել մինչև անդամ այսպէս շոգին: Իսկ այս բոլորի համար մի դառարկ շնորհակալութիւն անող էլ չի լինելու: Մենք՝ դժբախտ մշակ-մրջիւններս, ամենքս էլ աշխատում ենք, և մեր կեանքը ինչով է լաւ: Ձակատագիր...

—Դուք, կոչեադնդեռ, չափազանց ցամաք, իսկ դուք, մրջիւն, չափազանց մռայլ կերպով էք նայում կեանքի վրայ, ընդդիմաբանեց նրանց ճպուռը: Ո՛չ, դնդեռ, ես սիրում եմ առանց որևէ նպատակի ճռճռալ ու թռչկոտալ, և ոչինչ, խիղճս ինձ չի տանջում: Մանաւանդ որ դուք ամենևին չպարզեցիք այն հարցը, որ յարուցել էր տիկին մողէսը: Նա հարցրեց. «Աշխարհ ասածն ինչ է», իսկ դուք խօսում էք ձեր աղբից շինած դնդի մասին. այդ մինչև անդամ անքաղաքավարութիւն է: Աշխարհը, — աշխարհը, իմ կարծիքով, արդէն նրա համար շատ լաւ բան է, որ նրանում մատղաշ խոտ, արեգակ և զեփիւռ կայ մեզ համար:

եւ ինչպէս էլ մեծ է։ Դուք այստեղ՝ ծառերի մէջ նստած հասկացողութիւն անգամ չէք կարող ունենալ, թէ ինչպէս մեծ է նա։ Երբ ես դաշտումն եմ լինում, երբեմն քանի կարողանում եմ վեր եմ թռչում ու, հաւատացնում եմ ձեզ, ամբողին բարձրութեան եմ հասնում։ Եւ հէնց այնտեղից տեսնում եմ, որ աշխարհը անվերջ է։

—Ճշմարիտ է, խորագիտաբար հաստատութիւն տուեց աշխէտը։—Բայց և այնպէս, ասին՝ ինչ որ ես իմ կեանքումս տեսել եմ, դուք նրա մի հարիւրերորդ մասն էլ չէք կարող տեսնել։ Ափսոս, որ դուք ըմբռնել չէք կարող, թէ ինչ բան է վերստ ասածը... Ամենայն օր որ ես այստեղից դնում տակառով ջուր եմ բերում՝ մէկ վերստ է, բայց ամենևին ինձ չեն կերակրում այնտեղ։ Գնում եմ և միւս գիւղերը, ուր թէև ինձ միշտ յարդ են տալիս, սակայն շատ վատն է լինում։ Գնում եմ նոյնպէս Նիկոլաև, այդ քաղաքը քսանութ վեստ հեռու է մեր գիւղից։ այնտեղ ինձ լաւ յարդ են տալիս, միայն ես չեմ սիրում այնտեղ գնալ, որովհետև այնտեղ գնալիս պարոնն է լինում նստած, որնոր հրամայում է կառապանին քշել մեզ, իսկ կառապանը շատ վատ մտրակել գիտէ... Եւ էլի ուրիշ շատ գիւղեր ու քաղաքներ... օրինակ, Խերսոն քաղաքը... բայց այս բոլորը դուք որտեղից կարող էք հասկանալ... Ահա այ, այս է աշխարհ ասածը. ասենք ամբողջը չէ, բայց և այնպէս մի նշանաւոր մասն է։

Աշխէտը լռեց, բայց նրա ներքին շուրթը դեռ էլի շարժվում էր, կարծես նա մի բան էր շշնջում։ Այդ նրա ծերութիւնից էր՝ նա տասնեօթ տարեկան էր արդէն. իսկ այդ տարին ձիու համար նոյնն է, ինչ որ մարդուս համար եօթանասունեօթը տարին։

—Ինձ համար անհասկանալի է ձեր այդ ձիային խելօք խօսքերը և, ուղիղն ասեմ, չեմ էլ աշխատում հասկանալ, ասաց խխունջը։ Միայն թէ ինձ համար մագա-

ըիկոն լինեը, իսկ նրանից բաւական կայ. ահա արդէն չորս օր է ինչ սողում եմ, բայց դեռ նա չի վերջացել: Եւ այդ մագարիկոնի ետև կայ էլի մի ուրիշը, իսկ նրա մէջն էլ անկասկած նոտած է էլի մի խխունջ: Ահա ձեզ բոլորը: Եւ բանս թռչկոտելու էլ չի ընկնում.—այդ բոլորը խելքի փչած դատարկ բաներ են. նստիր քեզ համար ու կեր այն տերևը, որի վրայ նստած ես: Եթէ որ սողալ չճուլանայի, ես հիմա ձեզ ու ձեր այդ խօսակցութիւնները շատ վաղուց թողած գնացած կըլինէի. այդ բաներից մարդու գլուխ է ցաւում, ուրիշ ոչինչ:

—Ո՛չ, կրներէք, ինչո՞ւ էք այդ ասում,—ընդմիջեց ճպուռը,—շատ ախորժելի է ճռճռալը, մանաւանդ այսպիսի լաւ առարկաների մասին, ինչպէս անսահմանութեան ու էլի սրա նման բաների: Իհարկէ կան գործնական բընաւորութիւններ, որոնք միայնևեթ հոգում են այն բանի մասին թէ՝ ինչպէս լըցնեն իրանց ստամոքսը. օրինակ, ինչպէս դուք կամ այս աքանչելի թրթուրը...

—Ա՛խ, ոչ, հանգիստ թողէք ինձ խնդրում եմ, հանգիստ թողէք, ինձ ձեռը մի՛ք տալ, ողբագին բացականչեց թրթուրը.—ես այս անում եմ ապագայ կեանքի համար, միմիայն ապագայ կեանքի համար:

—Էլ այդ ինչ ապագայ կեանքի համար է:

—Մի՛թէ դուք չգիտէք, որ ես մահից յետոյ գոյնըզգոյն թևերով թիթեռ եմ դառնում:

Աշխէտը, խխունջը և մողէսը այդ չգիտէին, բայց միջատները միօրևիցէ հասկացողութիւն ունէին այդ մասին: Ամենքն էլ մի փոքր ժամանակ լռեցին, որովհետև ոչ ոք չէր կարող մի կարգին բան ասել ապագայ կեանքի մասին:

—Յարգանքով պէտք է վերաբերուել դէպի հաստատուն համոզմունքը, վերջապէս ճռճռաց ճպուռը:—Արդեօք ոչ ոք չէ՞ կամենում դարձեալ մի բան ասել: Կարելի է

դուք կրկամենայիք, պարձաւ նա դէպի ճանճերը։ Եւ նրանցից անդրանիկը պատասխանեց.

—Մենք չենք կարող ասել թէ մեզ համար վատ է։ Մենք հէնց այս րոպէիս դուրս եկանք սենեակից, տիկինը ամանով եփած մուրաբայ էր դրել, խոփի տակից մենք ներս մտանք և կերանք։ Մենք գոհ ենք մեր վիճակից։ Մեր մայրը թաղուեց մուրաբայի մէջ, բայց ինչ արած, նա արդէն բաւական ապրել էր աշխարհիս երեսին։ Իսկ մենք գոհ ենք։

— Պարոնները, ասաց մողէսը, ես կարծում եմ որ դուք ամենքդ էլ բոլորովին իրաւացի էք, սակայն մի ւս կողմից...

Բայց մողէսը չկարողացաւ վերջացնել, թէ մի ւս կողմից ինչ, որովհետև ղաց, թէ մի բան իր պոչը ամուր գետնին սեմեց։ Դա կառապան Անտոնն էր, որ քնից զարթնել եկել էր աշխէտին տանելու, նա անակնկալ եկաւ, ոտը դրեց ընկերուհեան վրայ և բոլորին էլ ոտի տակ տուեց։ Միայն ճանճերն էին որ թռան ձնելու իրանց մեռած և մուրաբայով ողողուած մօրը, և մէկ էլ մողէսը, որ փախաւ կտրած պոչով։ Անտոնը բռնեց աշխէտի ճակատի փինջից և դուրս տարաւ այգուց, որ լծի տակառով կառքի վրայ և գնայ ջուր բերի, իրան-իրան էլ խօսելով. «դէ արի էլի, պոչատ դու», որին աշխէտը պատասխանեց միայն վռռըցնելով։

Իսկ մողէսը մնաց անպոչ։ Ճիշտ է թէև մի քանի ժամանակից յետոյ պոչը դուրս եկաւ, բայց նրա ծայրը մնաց ընդմիշտ մի տեսակ բութ ու սևացած։

ՕՐ. ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՈՒՆԻ։

ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

Քաղցած Աղուէսուկն ինչ ըրաւ չըրաւ,
Այգի մը մտաւ,
Տեսնէ որ խաղողները
Կուզ-կուզ կախուած կըվառին.
Սանամարին ոչ թէ միայն աչքերը,
Ակռաներն ալ կըրակ առին.
Գուզերն որ ըսես՝ իրարմէ Հատուն,
Մէկմէկ յակընթի նըման պըսպըղուն։
Ի՛նչ էր՝ գիտե՞ս՝ ցաւալին,
Կուզերը խիստ բարձր էին։
Մեր Աղուէսուկը շատ աշխատեցաւ.
Ցատքեց ցատքըտեց, չորս դին ման եկաւ,
Ճար մը չըգըտաւ,
Մէկ-կուզ մըն ալ փըրցընել չկըրցաւ.

Կըտեսնէին աչուըները,
Չէին հասնէր ակռաները։
Ամբողջ ժամէն աւելի
Պարապ տեղը կըյոդնի,
Կելնէ կերթայ բանն ու կըսէ.
«Էհ ինչ կայ.
Տեսքին նայիս նէ գէշ չէ,
Բայց կախ-կանանչ է ահա.
Չես գըտներ մէջը և ոչ մէկ հատիկ
Հասուն խաղողիկ։
Գիտեմ, բերանդ որ դըրուին,
Իսկոյն ակռաներըդ չարչարար պիտի հարուին։»

† ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆ։

V

ՕԴԸ ԵՒ ՆՐԱ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Եզ անցեալ տարուայ «Աղբիւրից» յայտնի է, որ օդը իր երկու յատկութիւններով նման է հաստատուն և հեղուկ մարմիններին. որովհետև օդը, ինչպէս և ամենայն մարմին, բռնում է մի որոշ տեղ և ունի նոյնպէս ծանրութիւններ։

Այժմ տեսնենք չունի արդեօք օդը մի նոր յատկութիւն։

Անկասկած դուք գիտէք, որ ամենայն մի մարմին ունի ծանրութիւն. օրինակ, եթէ վերցնէք քար, փայտի կամ մետաղի կտոր, ձեռքով կրզդաք այս մարմինների ծանրութիւնը, կամ թէ վերցնէք դատարկ բաժակ և ածէք նրա մէջ ջուր, ձէթ կամ մի այլ հեղուկ մարմին, դուք կրզդաք, որ բաժակը ծանրացաւ։ Այս փորձերից հեշտութիւնով կարող էք եզրակացնել, որ մարմինները առհասարակ ճնշում են գործում ձեռքի վրայ։

Մարմինների այս ճնշումն կոչվում է ծանրութիւն։

Այսպէս՝ ինչ հաստատուն և հեղուկ մարմին վերցնէք, դուք կրզդաք ճնշումն ձեր ձեռքի վրայ,—ուրեմն հաստատուն և հեղուկ մարմինները ունին ծանրութիւն։

Իսկ օդը ունի՞ արդեօք ծանրութիւն։

Կարելի էր օդի ծանրութիւնը ապացուցանել այսպէս։ վերցնել դատարկ աման, լցնել օդով և կշռել, յետոյ դուրս հանելով ամանից օդը դարձեալ կշռել և եթէ չի-

բաւի օդը ունի ծանրութիւն, դատարկ ամանը (առանց օդի) օդով լի ամանից պէտք է թեթև լինի։

Բայց այսպիսի փորձ մենք անկարող ենք անել, որովհետև չգիտենք ինչպէս հանել ամանից օդը, ուրեմն և չենք կարող իմանալ դատարկ ամանի ծանրութիւնը։— Ի՞նչպէս ուրեմն իմանալ օդի ծանրութիւնը։

Գիտնականները առաջին անգամ օդի ծանրութիւնը գտան առանց կշռելու։ Մենք էլ այդպէս անենք։ Բայց սրա համար հարկաւոր է առաջուց ծանօթանալ օդի և մի այլ յատկութեան հետ։

Փորձ 10. Վերցրէք օդահանը և խթոցը յետ քաշեցէք, ինչպէս ցոյց է տուած 13 նկարի վրայ։ Օդահանի

Նկար 13.

ծայրին հագցրէք եղան փամփուշտ և թելով ամուր կապեցէք. այժմ եթէ խթոցը ցածրացնէք, փամփուշտը կընկնի։ Ի՞նչից է այս բանը պատահում։

Դուք երբ խթոցը ցածրացնում էք, խթոցը ճնշում է օդահանի մէջ եղած օդը և այս ճնշումը օդի միջնորդութիւնով հաղորդվում է փամփուշտին, և որովհետև փամփուշտի կողմերը լայնանում են հաւասարաչափ, ուրեմն և օդի ճնշումն հաղորդվում է ամենայն կողմ։

Ընդհասարակ եթէ օդի վրայ ճնշումն գործէք մի որոշ ուղղութիւնով, այս ճնշումն կրհաղորդուի օդի միջնորդութիւնով ամենայն կողմ։

Օդի այս յատկութիւնը խնդրեմ չմոռանաք։

Փորձ 11. Լամպարի ապակին խցեցէք երկու կող-

մից։ վերին խցանի մէջ մտցրէք ձագառ մօտաւորապէս մինչև յատակը և դարձեալ կորացրած խողովակ AC. (նկար 14)։ Ստորին խցանի մէջ մտցրէք կորացրած խողովակ Bd։ A և B խողովակների մէջ ածէք ջուր։ Եթէ ուշադրութիւնով նայէք, կտեսնէք որ ինչպէս AC խողովակի մէջ նոյնպէս և Bd խողովակի երկու սրունգների մէջ ջուրը միևնոյն բարձրութիւն ունի, եթէ մլմիայն խողովակները ուղղահայեաց են դրած։ Այժմ փչեցէք A ծայրի մէջ, ջուրը A սրունգի մէջ կրցածրանայ, իսկ C սրունգի մէջ կրբարձրանայ։ Ինչո՞ւ։— Որովհետև A սրունգի մէջ փչելուց ճնշումն մեծացաւ։ Այժմ եթէ ջուր ածէք ձագառի մէջ, ջուրը դուրս թափուելով ձագառից դուրս կրհանի օդը։ Ջուրը ճնշումն է գործում օդի վրայ ներքևից, ուրեմն ինչպէս դուք արդէն գիտէք և օդը պէտք է ճնշումն հաղորդի ամենայն կողմ։ Այս պատճառով ճնշումն C և d սրունգների մէջ պէտք է մեծանայ. այս երևոյթը հաստատում է նրանով, որ ջուրը C և d սրունգների մէջ ցածրանում է։ Խնդրեմ ուշադրութիւն դարձնէք և հետևեալ հանդամանքի վրայ. ջուրը օդի վրայ ճնշումն է գործում մլմիայն ներքևից. այս ճնշումը միևնոյն ժամանակ հաղորդվում է d սրունգին վերևից և C սրունգին ներքևից։ Եթէ լամպարի ապակին դարձեալ ունենայ մի ուրիշ տեղ A խողովակի պէս մի որևիցէ խողովակ, նրա մէջ նոյնպէս ճնշումն կրմեծանայ։



Նկար 14.

Փորձ 12. Վերցրէք միորևիցէ աման. (նկար 15) ածէք նրա մէջ ջուր. դրէք ամանի մէջ երկու կորացրած խողովակներ, ինչպէս B և C խողովակները 15 նկարի վրայ։ Խողովակների ծայրերը պէտք է ամանի մէջ եղած ջրի մակերևոյթից բարձր լինին։ Ամեն մի խո-

ղովակի մէջ ածէք մի քիչ ջուր։ Ջուրը խողովակների սրունգների մէջ պէտք է մնայուն բարձրութիւն ունենայ։ Յետոյ վերցրէք լամպաքի ապակին և վերին ծայրը խցե-



Նկար 15.

լով խցանով, խցանի մէջ մտցրէք մէկ կամ երկու կորացրած խողովակ։ Այժմ այդ ապակին խողովակի հետ միասին դրէք ամանի մէջ այնպէս, որ B և C խողովակների ծայրերը գտնուին ապակու մէջ։ Դուք տեսնում էք, որ ջուրը աշխատում է մտնել ապակու մէջ և հէնց դրա համար ճնշումն է գործում օդի վրայ։ Այս ճնշումն հաղորդվում է ամենայն կողմը։ Այս պատճառով ջուրը ցաճրանում է այն սրունգների մէջ, որոնք գտնվում են ապակու մէջ։ Վերջին փորձերի մէջ մեծացնելով օդի վրայ ներգործող ճնշումը, տեսաք որ այս ճնշումն օդը հաղորդում է ամենայն կողմ։

Տեսնենք այժմ ինչ կըպատահի, եթէ օդի վրայ ներգործող ճնշումը միսրևիցէ կողմից պակասի։ Անշուշտ և օդի ճնշումն կըպակասի ամենայն կողմից։ Ցոյց տանք այս երևոյթը փորձով։ Նախ և առաջ մտաբերեցէք թէ ինչպէս 10, 11, 13 փորձերի մէջ դուք մեծացնում էիք օդի ճնշումն։ Օրինակ, 11-որդ փորձումը ապակին ամբողջապէս բռնուած էր օդով, կամ թէ ինչպէս առհասարակ ասում են, օդը բռնած ունէր ապակու ամբողջ ծաւալը։ Դուք ածեցիք ջուր ապակու մէջ և ջուրը բռնեց ապակու ծաւալի մի մասը, ուրեմն օդը այժմ աւելի քիչ ծաւալ է բռնում։ Այս պատճառով օդը ճնշուեց և նրա ճնշումն մեծացաւ։ Այժմ դուք ինձ կըհարցնէք, ինչպէս մեծացնել օդի ճնշումն։—Հարկաւոր է որ օդը աւելի քիչ ծաւալ բռնի քան թէ ունի. այնժամանակ նրա ճըն-

շումն կըմեծանայ։ Իսկ ինչպէս փոքրացնել օդի ճնշումը։ — Պէտք է մեծացնել օդի բռնած ծաւալը, այնժամանակ օդի ճնշումը կընուազի։ Այս երևոյթը պէտք է ստուգել փորձով։ Փորձը նոյնպէս ցոյց է տալիս, որ փոքրացնելով մի որևիցէ կողմից ճնշումն, այդ ճնշումն ամենայն կողմից էլ փոքրանում է։ — Ի՞նչպէս անել այդպիսի մի փորձ և ինչպիսի աման ընտրել։ — Ամանը պէտք է լաւ փակուած լինի խցանով, որպէսզի օդը չկարողանայ մտնել կամ դուրս գալ ամանից։ Ամանի մէջ պէտք է մտցնել ձագառ նրա մէջ ջուր ածելու համար։ Ջուր ածելով մենք օդի ծաւալը կըփոքրացնենք, ուրեմն և նրա ճնշումն կըմեծացնենք։ Օդի ճնշումը փոքրացնելու համար հարկաւոր է օդի ծաւալը մեծացնել ջուր հանելով ամանից, իսկ սրա համար հարկաւոր է ամանի յատակի մէջ մտցնել խողովակ։ Հարկաւոր է նոյնպէս ունենալ մի գործիք, որի միջնորդութիւնով կարողանանք իմանալ, թէ ինչպէս է փոխվում օդի ճնշումն և թէ այդ փոփոխումն ամեն կողմերից է լինում թէ միմիայն մի կողմից։ — Այժմ տեսնենք փորձը ինչպէս է կատարվում։

Նկար 16.

Փորձ 13. Վերցրէք լամպարի ապակին, ծայրերը խցեցէք խցանով։ Վերին խցանի մէջ մտցրէք կորացրած խողովակ A և ձագառ B (նկար 16), իսկ ստորին խցանի մէջ դարձեալ կորացրած խողովակ C և ուղիղ խողովակ D։ Կորացրած խողովակների մէջ ածէք մի քիչ ջուր, որը ամեն մի խողովակի սրունգների մէջ միևնոյն բարձրութիւն կունենայ։ Փակեցէք D խողովակը մատով։ Ածէք ապակու մէջ մի քիչ ջուր։ Ջուրը կըբռնի ապակու ծաւալի մի մասը և կըճնշի օդը։ Այժմ օդը բռնում է աւելի փոքր ծաւալ, նրա ճնշումն կըմեծանայ և կըհաղորդուի ամենայն կողմ։ Ինչո՞ւ։ — Ո-

ըովհետև, ինչպէս դուք տեսնում էք այն սրունգների մէջ եղած ջուրը, որոնք ապակու մէջ են, ցածրանում է։ Այժմ տեսնենք ինչ կըպատահի, եթէ փոքրացնենք օդի ճնշումն ամանի մէջ։ Սրա համար դուրս ածէք կորացրած խողովակներից ջուրը, փակեցէք D խողովակը։ Յետոյ ածէք ջուր ձագառի միջնորդութիւնով ամանի մէջ մինչև կէսը։ Այժմ ածէք ջուր կորացրած խողովակների մէջ։ Որպէսզի բոլոր սրունգների մէջ ջուրը միևնոյն բարձրութիւն ունենայ, հարկաւոր է D խողովակից մի քանի կաթիլ ջուր դուրս ածել։ Փակելով ձագառը խցանով և հեռացնելով մատը D խողովակի ծայրից, ջուրը դուրս կըթափուի ապակուց. օդի ծաւալը կըմեծանայ և այդ պատճառով նրա ճնշումը կըփոքրանայ։ Ճնշմա ն փոքրանալը կըհաղորդուի ամեն կողմ։ Դուք տեսնում էք, որ ջուրը բարձրացաւ խողովակների այն սրունգների մէջ, որոնք ապակու մէջ են։ – Այժմ ասացէք խնդրեմ, ինչ իմացաք 10, 11, 12 և 13 փորձերից։ Ահա ինչ։—Մի որևիցէ ամանի մէջ փակուած օդը ճնշումն է գործում ամանի պատիկների վրայ։ Եթէ օդի բռնած ծաւալը մեծացնենք, օդի ճնշումն ամենայն կողմից կըփոքրանայ։ Եթէ փոքրացնենք օդի ծաւալը, ճնշումն կըմեծանայ դարձեալ ամենայն կողմից։ Եթէ մեծացնենք կամ փոքրացնենք օդի վրայ ներգործող ճնշումն մի որևիցէ կողմից, միևնոյն ժամանակ ճնշման այդ մեծանալը կամ փոքրանալը հաղորդվում է ամենայն կողմ։

Փ ո ր ձ 14. 12-որդ փորձի մէջ լամպարի ապակին դնում էինք ջրի մէջ և դրանով մեծացնում էինք օդի ճընշումն ապակու մէջ և ճնշման մեծանալը հաղորդվում էր ամեն կողմ։ Այժմ հակառակ փորձն անենք։

Այս փորձը կատարելու համար վերցրէք արդէն ձեզ ծանօթ գործիք (տես նկ. 15), միմիայն այն փոփոխութիւնով, որ վերին խցանի մէջ բացի կորացրած խողովակից հարկաւոր է մտցնել ուղիղ խողովակ E (նկ. 17)։ Լցրէք

ջրով կորացրած խողովակը և ապակին դրէք ջրով լի ամանի մէջ։ Այնժամանակ ջուրը կըմտնի ապակու մէջ։ Ինչո՞ւ։ —Որովհետև օդը կարող է դուրս գալ E խողովակի միջնորդութիւնով։ Այժմ փակեցէք մատով E խողովակը և մի փոքր բարձրացրէք ապակին, ջուրը ապակու մէջ կըցածրանայ։ Իսկ ինչ կըպատահի օդի հետ։ Նրա ծաւալը կըմեծանայ, ճնշումն կըփոքրանայ և ճնշման փոքրանալը կըհաղորդուի ամենայն կողմ և ջուրը կըցածրանայ այն սրունգների մէջ, որոնք ապակու մէջ են։



Նկար 17.

Փորձ 15. Փակեցէք օդահանը խցանով։ Խցանի մէջ մտցրէք կորացրած խողովակ, ինչպէս ցոյց է տուած 18 նկարի վրայ։ Խողովակը լցրէք ջրով, որպէսզի ջուրը խողովակի սրունգների մէջ միևնոյն բարձրութիւն ունենայ. պէտք է խթոցը մի քանի անգամ յետ կամ առաջ շարժել։ Երբ ջուրը միևնոյն բարձրութիւնը ստացաւ, խթոցը մի փոքր առաջ շարժեցէք. այնժամանակ օդի ծաւալը կըքչանայ և հետևապէս նրա ճնշումն կըմեծանայ և ջուրը կըցածրանայ խողովակի այն սրունգի մէջ, որի ծայրը օդահանի մէջ է։

Նկար 18.

Այս բոլոր փորձերը ցոյց են տալի, որ օդը ճնշում է գործում ամենայն կողմ, բացի դրանից օդը հաղորդում է ճնշման մեծանալը կամ փոքրանալը նոյնպէս ամենայն կողմ։

Ե. ՋՈՒՐԱԲԵԱՆՑ։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա ն ա ս ո ւ ն ն ե ր ի Ծ ի ծ ա ղ ն ու լ ա ց ը։ Մարդուս Ծիծաղելու համար երկու անհրաժեշտ պայմաններ են հարկաւոր. նախ՝ երեսի մկանունքների շարժողութիւն և երկրորդ՝ այն մտապատկերները, որոնք Ծիծաղի պատճառ են դառնում։ Այդ երկու պայմանները ունին նաև քանի մի անասունները։ Ինչպէս օրինակ, կապիկներից Ծիծաղում են շիմպանզէն և տաճկ ասուած տեսակները։ Շունը կարող է Ծիծաղել և ծամածռութիւնները անել սերուց կամ բաւականութիւնից հարկադրուած և կամ՝ կեղծելուց ու խրատամանկութիւնից։ Շները Ծիծաղը լինում են կամ բարկ, կամ չար։ Նրանք հասկանում են, երբ մարդս Ծիծաղում է, և իրանց հերթին աշխատում են նաև Ծիծաղեցնել, և վիրաւորվում են, երբ այդ փորձը չի յաջողվում իրանց։ Որպէս չան մեկը զանազան սատանութիւններով աշխատում էր իր տիրոջը զբաղեցնել և երբէ չէր կարողանում Ծիծաղեցնել, սկսում էր մռմռալ։ Լոնդոնի կենդանաբանական այգում մի օրանգուտանի քէֆը սաստիկ գալիս էր, երբ իրա ծամածռութիւնները հասարակութեան մէջ Ծիծաղ էր յարուցանում։ Դոկտոր Մորը պատմում է մի ձեռնասունը եղջերուի մասին, թէ երբ նա տեսնում էր երեխաներին Թռչտելիս՝ ինքը նրանից աւելի էր Ծիծաղում։ Թութագը գիտէ Ծիծաղել, և այն էլ մեծ մասով իր ապարմունքների ու սատանութիւնների վրայ։ Սերբուրնը պատմում է թէ՝ մարդու մկկը մի կաչաղակ ունէր, որն այնպէս ուրախ և բնական էր Ծիծաղում որ, ով լսում էր այդ Ծիծաղը՝ կամայ-ակամայ ինքն էլ էր Ծիծաղում։ Ծիծեռնակների մասին էս ասում են թէ՝ կատուն գլխին մի յաղողակ խաղ խաղալուց Ծիծաղու Թուլանում են, միքրիկ երեխաների Ծիծաղի նման, երբ նրանց խուտուտ են տալիս։ Բայտնի Հանապարհորդ Լիվինգստոնը ասում է՝ Աֆրիկայի Թուխ կարմիր եգիպտահաւերի աղաղակը նման է մարդկանց բարձրաձայն Ծիծաղին։

Նոյնպէս հաստատ կարելի է ասել, որ անասունները էս լալու ընդունակութիւն ունին։ Ինչպէս օրինակ՝ շունը, ձին, փիղը, խոշոր մկները, արծիւը, եղջերուների քանի մի տեսակները, շիմպանզէն և էլի ուրիշ կապիկները, ուղտը, եղջերաւոր կենդանին և ընձուղտը արցունք են Թափում, երբ տխուր են լինում։ Թութագը լաց չի լինում, բայց ընդունակութիւն ունի հեկեկալու այնպէս, ինչպէս մարդ լաց լինելիս հեկեկում է։ Շիմպանզէն լաց է լինում, երբ զգում է թէ իրան պէտք է

պատժեն. միւս կապիկները ու փիղերը՝ երբ խաբուում են իրանց ակնկալութիւնների մէջ և եղջերուն՝ երբ չի կարողանում ազատուել իրան հետամտողների ձեռքից, լաց են լինում։ Տիկին Բէրտօնը պատմում է, որ Սիբիեան անապատում լինքը ուղտեր է տեսել, որոնց այտերից արցունք էր թափվում, որովհետև սաստիկ նեղվում էին ծարաւութիւնից։ Մի ձիու ոտի մէջ ասեղ էր մտել և նա այդ ցաւից լաց էր լինում։ Դոկտոր Բաերլէտը եաւայ կղզու վրայ գնդակահարել է անում մի կապիկ, որ ձագը գրկած ծառից ընկնում է և մեռնում արցունքն աչքերին։

Թղթէ գանգուածից էլի մի նոր գիւտ։ Շատերդ կարդացած կամ լսացած կըլինիք, որ Հիւսիսային-Ամերիկայում վաղուց է լինչ թղթէ գանգուածից պատրաստում են՝ զանազան տեսակ սպասակեղէնները, շորերը, կահ-կարասիք, ափսէները և ամենայն տեսակ ամանեղէնները, երկաթուղու ձողերը, վագոնների և հասարակ կառքերի անիւները, նոյնիսկ ամբողջ տներ եւայլն։ Այնպէս որ թղթի գանգուածից այդքան զանազան տեսակ իրեղէնները չինելուց յետոյ, կարծես թէ այլևս դժուար և անսպասելի էր էլի մի նոր բան գտնելը։ Բայց ամերիկական հնարագիտութեան և համբերատար աշխատութեան առաջ դժուար և անսպասելի բան չկայ։ Հիւսիսային-Ամերիկայում այս մօտերումս ծախու էր հանուած տղամարդկանց շապիկների կրծքերը, որոնցից ամեն մինը առանց մաքրելու եօթն օր չարունակ կարելի է գործածել, և բացի դրանից նաև վրան կարդալ եօթ ուրթ մանրիկ պատմուրթիւններ։ Շապկի այդ նոր հնարած կրծքերը շինած է բաւականին հաստ թղթից և ունի եօթը ծալ, որոնց հետզհետէ պոկելով՝ կըստացուի եօթ հատ մաքուր շապկի կրծքեր զանազան նկարներով, նաև ծաղիկներով և բացի դրանից ամեն մէկի վրայ էլ նոյնպէս եօթը մանրիկ պատմուրթիւններ։

